Հավելված
Հաստատված է
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2014 թվականի ապրիլի 16-ի
№86Լ որոշմամբ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան **3**

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունները **5**

1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում 5
2. Սակագնային քաղաքականություն 7
3. Լիցենզավորում և լիցենզավորված անձանց պայմանագրային հարաբերությունների կարգավորում 11
4. Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ 12
5. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում 15
6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն 17
7. Հանձնաժողովի հիմնական գործունեության ընթացիկ ուղղություններ 19

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության ոլորտային ծրագրերը **21**

1. Էներգետիկայի բնագավառ 21
2. Ջրային ոլորտ 23
3. Հեռահաղորդակցության բնագավառ 24

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ **30**

Նախաբան

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը էներգետիկայի, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության), փոստային կապի (ունիվերսալ ծառայությունների մասով), երկաթուղային տրանսպորտի (ենթակառուցվածքի օգտագործման վճարի սահմանման մասով), տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման (սակագների մասով) բնագավառներում և ջրային ոլորտում (սակագնային քաղաքականության և ոչ մրցակցային ջրամատակարարման ջրային համակարգի օգտագործման թույլտվությունների տրամադրման մասով) կարգավորող մարմին է, որը գործում է «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին», «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Փոստային կապի մասին», «Երկաթուղային տրանսպորտի մասին», «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակում:

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) 2013 թվականին գործել է հետևյալ կազմով.

Ռոբերտ Նազարյան՝ հանձնաժողովի նախագահ

Շիրազ Կիրակոսյան՝ հանձնաժողովի նախագահի տեղակալ

Սամվել Արաբաջյան՝ հանձնաժողովի անդամ

Մուշեղ Կոշեցյան՝ հանձնաժողովի անդամ

Արթուր Վարդանյան՝ հանձնաժողովի անդամ

Հանձնաժողովն իր աշխատանքը կազմակերպել է աշխատակազմի միջոցով, որն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները.

- սակագնային քաղաքականության վարչություն,
- ֆինանսական վերլուծության վարչություն,
- իրավաբանական և լիցենզավորման վարչություն՝
    - իրավաբանական բաժին,

- լիցենզավորման բաժին,

- լիցենզավորված գործունեության մոնիթորինգի և ներդրումային ծրագրերի վարչություն՝
  - տեխնիկական մոնիթորինգի և փորձաքննության բաժին,
  - ներդրումային ծրագրերի բաժին,
- հեռահաղորդակցության վարչություն՝
  - կարգավորման քաղաքականության բաժին,
  - ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժին,
- սպառողների հետ կապերի բաժին,
- տնտեսական բաժին,
- անձնակազմի կառավարման բաժին,
- հաշվապահական հաշվառման բաժին,
- ներքին աուդիտի բաժին,
- ընդհանուր բաժին:

Հանձնաժողովի ստորաբաժանումների աշխատանքը, «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, համակարգում է հանձնաժողովի աշխատակազմի ղեկավարը:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գործունեության հիմնական ուղղությունները

1. Կարգավորման օրենսդրական դաշտի կատարելագործում

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովն իր գործառույթների առաջնահերթություններից է համարում կարգավորման օրենսդրական դաշտի շարունակական կատարելագործումը և միջազգային առաջավոր փորձի վրա հիմնված բազմակողմանի իրավական կարգավորումը՝ ելնելով սպառողների և կարգավորվող անձանց իրավունքների պաշտպանության, նրանց շահերի հավասարակշռման, մրցակցային միջավայրի զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման, կարգավորվող ենթակառուցվածքներում արդյունավետ ներդրումների խրախուսման և կարգավորման դաշտի թափանցիկության ապահովման առաջնահերթություններից, հանրային ծառայությունների ոլորտում միջազգային համագործակցության անհրաժեշտությունից:

Հանձնաժողովը գործուն մասնակցություն է ունեցել «Էներգետիկայի մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներում և ՀՀ հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի քննարկման և մշակման աշխատանքներին:

Մասնավորապես, 2013 թվականին գործարար միջավայրի բարելավման և վարչարարության ընթացքում կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող փաստաթղթերի և մի շարք գործողությունների կրճատման նպատակով, «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի հետ համատեղ փոփոխություններ կատարելու առաջարկություններ են ներկայացվել «Էներգետիկայի մասին», «Լիցենզավորման մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքների մասով, որոնք արդեն ընդունվել են ՀՀ Ազգային ժողովի կողմից: Նշված փոփոխությունների արդյունքում կրճատվել են էներգետիկայի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները և հանձնաժողովի կողմից լիցենզիաների տրամադրման, սակագների սահմանման (վերանայման), ինչպես նաև

պայմանագրերի գրանցման համար ամրագրված ժամկետները, հստակ կարգավորում են ստացել էներգետիկայի բնագավառում կարգավորման ոչ ենթակա գործունեության տեսակներ: Նշված փոփոխություններով պայմանավորված՝ հանձնաժողովի կողմից 2013 թվականին լրամշակվել և օրենսդրական նոր կարգավորումներին են համապատասխանեցվել հանրային ծառայությունների ոլորտը կարգավորող իրավական ակտերը: Մասնավորապես, «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ պայմանավորված՝ հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 31-ի N285Ն որոշմամբ հաստատվել է էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց միջև կնքված և էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման պայմանագրերի գրանցման կարգը, որը սահմանում է էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց միջև կնքված էլեկտրական էներգիայի (հզորության), ջերմային էներգիայի, բնական գազի մատակարարման և ծառայությունների մատուցման, էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման պայմանագրերի գրանցման ընթացակարգը: Ընդունվել են նաև էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, էլեկտրական էներգիայի (հզորության) և բնական գազի ներկրման ու արտահանման գործունեության լիցենզավորման կարգը, ինչպես նաև ՀՀ օրենքների դրույթներին համապատասխան և ի կատարումն դրանց՝ մի շարք այլ ենթաօրենսդրական ակտեր:

Համապատասխանաբար, փոփոխվել կամ լրամշակվել են ՀՀ էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման, էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից հանձնաժողով լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվության ներկայացման և ջերմամատակարարման համակարգի լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ներկայացման կարգերը, էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի լիցենզավորված անձանց կողմից ֆինանսական հաշվետվությունների ներկայացման հետ կապված հարաբերությունները կանոնակարգող իրավական ակտերը, ինչպես նաև ՀՀ տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ արտադրող

կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագների հաշվարկման մեթոդիկան:

Հեռահաղորդակցության ոլորտում գործարար միջավայրի բարելավման, այդ թվում՝ համապատասխան ընթացակարգերի պարզեցման և վարչարարության ծավալների նվազեցման նպատակով, փոփոխություններ են կատարվել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքում, որոնց արդյունքում հանվել են «ձայնային ծառայությունների մատուցում» և «տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցում» պարզ լիցենզիաների տեսակները, իսկ «հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործում)» բարդ լիցենզիայի տրման ընթացակարգը էապես պարզեցվել է: Տնտեսվարողների համար հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման գործունեության իրականացման միակ պայման է հանդիսանում հանձնաժողովին գրավոր ծանուցելու պահանջը: Այլ կերպ ասած՝ գործունեության լիցենզավորումից աստիճանական անցում է կատարվում դեպի գործունեության մասին ծանուցման ընթացակարգի:

2. Սակագնային քաղաքականություն

Հանձնաժողովի կողմից իրականացվող սակագնային քաղաքականությունը հիմնվում է համաշխարհային պրակտիկայում ընդունված անհրաժեշտ հասույթի ապահովման սկզբունքի վրա և նպատակաուղղված է հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց բնականոն տնտեսական գործունեության ապահովմանը, ինչպես նաև սպառողների և կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերի հավասարակշռմանը՝ միաժամանակ հնարավորություն ընձեռելով իրականացնելու արդիականացման և հեռանկարային զարգացման ծրագրեր:

2013 թվականի մայիս ամսին «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական և «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները դիմել են հանձնաժողով՝ սպառողներին վաճառվող բնական գազի, գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման, բաշխման և փոխադրման սակագների վերանայման հայտերով:

Հաշվի առնելով 2013 թվականի ապրիլի 1-ից հանրապետություն ներկրվող բնական գազի գնի թանկացումը, ինչպես նաև 2010-2012 թվականներին գազամատակարարման համակարգում իրականացված կապիտալ ներդրումների փոխհատուցման (շահույթի և մաշվածության տեսքով), անհրաժեշտությունը, գազամատակարարման համակարգի ընդլայնման հետ կապված շահագործման և պահպանման որոշ ծախսերի փոփոխությունները, ինչպես նաև ԱՄՆ դոլար/դրամ փոխարժեքի փոփոխությունը, հանձնաժողովը վերանայել և սահմանել է սպառողներին վաճառվող բնական գազի, գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման, փոխադրման և բաշխման նոր սակագներ:

Սպառողներին վաճառվող բնական գազի սակագնի բարձրացումը, ինչպես նաև մի շարք այլ գործոններ անհրաժեշտություն առաջացրեցին վերանայել նաև էլեկտրաէներգետիկական և ջերմամատակարարման համակարգերի սակագները:

Հաշվետու տարվա ընթացքում լրամշակվել է նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիայի պայմանների սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկան, որի նպատակն է եղել հավասարակշռել էլեկտրաէներգետիկական համակարգի ռիսկերը և բացառել սակագնային մարժայի հաշվարկման մեթոդիկայի մի շարք դրույթների տարաբնույթ մեկնաբանությունները:

Հաշվի առնելով ջերմային էլեկտրակայաններին վաճառվող բնական գազի նոր սակագները, «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի սակագնային մարժայի և մյուս ընկերությունների սակագների հաշվարկման մեթոդիկաները, 2013-2014 թվականների էլեկտրաէներգիայի (հզորության) արտադրության հաշվեկշռի վերաբերյալ «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի կանխատեսումները և հիմք ընդունելով էլեկտրական էներգիայի արտադրության ու սպառման կանխատեսումները, ֆինանսական հաշվետվություններով ներկայացված փաստացի ծախսերի ու 2012 թվականին էլեկտրաէներգետիկական համակարգում իրականացված ներդրումների վերլուծության արդյունքները, էլեկտրաէներգետիկական համակարգի միջին աշխատավարձի ավելացման անհրաժեշտությունը, ԱՄՆ դոլար/դրամ փոխարժեքի փոփոխությունը և մի շարք այլ գործոններ, հանձնաժողովը 2013 թվականի հուլիսի 7-ից վերանայել է արտադրող կայանների կողմից առաքվող էլեկտրական էներգիայի

(հզորության) և «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագները, «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» և «Հաշվարկային կենտրոն» ՓԲԸ-ների կողմից էլեկտրաէներգետիկական շուկային մատուցվող ծառայությունների հաստատագրված ամսական վճարները: Վերանայվել են նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի և «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի կողմից արդյունաբերական կարիքների համար առաքվող ջերմային էներգիայի սակագները:

Արդյունքում՝ 2013 թվականի հուլիսի 7-ից գործողության մեջ են մտել նոր սակագներ՝ ինչպես արտադրող կայաններից առաքվող էլեկտրաէներգիայի և էլեկտրաէներգետիկական համակարգին ծառայություններ մատուցող ընկերությունների, այնպես և վերջնական սպառողների համար:

Սպառողներին վաճառվող բնական գազի սակագնի փոփոխությամբ պայմանավորված՝ իրենց հայտերի հիման վրա 2013 թվականի հունիսին վերանայվել են «ՀԱՅՌՈՒՍԳՈԳԵՆԵՐԱՑԻԱ» ՓԲԸ-ի կողմից էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության «Ինքնավար ջերմային էլեկտրակայան-1 (ԻՋԷԿ-1)» կայանից առաքվող էլեկտրական էներգիայի և Երևան քաղաքի Ավան վարչական շրջանի Հովհաննիսյան, Վարուժանի, Իսահակյանի թաղամասերի սպառողներին վաճառվող ջերմային էներգիայի սակագները, իսկ 2013 թվականի հուլիսին՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը:

Հաշվետու տարվա ընթացքում ներկայացված հայտերի հիման վրա սահմանվել են 6 նորակառույց և վերանայվել 1 գործող փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

Ելնելով սղաճի և արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից, յուրաքանչյուր տարի, համաձայն ընդունված մեթոդիկայի, վերանայվում են վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագները: 2013 թվականի նոյեմբերին վերանայվել են «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ-ի «Լոռի-1» հողմային էլեկտրակայանից,

«Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ-ի կենսաբանական զանգվածից էլեկտրական էներգիա արտադրող կայանից և 131 փոքր հիդրոէլեկտրակայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագները:

2013 թվականին «Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի համակցված շոգեգազային ցիկլով աշխատող էներգաբլոկի 2013 թվականի նորոգման ժամկետների փոփոխման հետ կապված՝ ճշգրտվել են 2013 թվականի պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները: Հաշվետու տարվա վերջին ուսումնասիրվել և հաստատվել են էլեկտրական էներգիա արտադրող խոշոր կայանների կողմից հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացվող 2014 թվականի պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների չափաքանակները:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության և Իրանի Իսլամական Հանրապետության միջև իրականացվող գազ՝ էլեկտրական էներգիայի դիմաց գործարքի շրջանակում «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից Իրանի Իսլամական Հանրապետություն էլեկտրական էներգիայի արտահանման գործընթացը և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի «Հրազդան-5» կայանի արտադրած էլեկտրական էներգիան արտահանելու հանգամանքը՝ համապատասխան փոփոխություններ են կատարվել Հայաստանի Հանրապետությունից էլեկտրական էներգիայի արտահանման գործող կարգում: Լրամշակվել են նաև ջերմամատակարարման համակարգի լիցենզավորված անձանց կողմից լիցենզավորված գործունեության վերաբերյալ տեխնիկատնտեսական տեղեկատվությունների ներկայացման կարգը և ձևերը:

Հաշվետու տարվա ընթացքում լրամշակվել է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ենթակառուցվածքի օգտագործման վճարների սահմանման և վերանայման կարգը, որը պայմանավորված է եղել ենթակառուցվածքի օգտագործման վճարների հաշվարկման մեթոդիկայի ընդունմամբ:

2013 թվականի փետրվար ամսին վարձակալության 8-րդ պայմանագրային տարվա համար սակագների ճշգրտման առաջարկով հանձնաժողով է դիմել «Երևան Ջուր» ՓԲԸ-ն՝ բազիսային սակագներում հաշվի առնելու մանրածախ ջրամատակարարման ծավալների, տարեկան սղաճի, ՀՀ դրամ/եվրո փոխարժեքի և ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխությունները: Ելնելով

սակագնի ճշգրտման մեթոդաբանությամբ ամրագրված բոլոր գործոնների ազդեցության հանրագումարից, ինչպես նաև 2012թ. մանրածախ ջրամատակարարման ծավալների և այլ եկամուտների ուսումնասիրության և վերլուծության արդյունքներից, ճշգրտված մանրածախ սակագինը հաշվարկվել է 170,256 դրամ/խմ (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը), որը շուրջ 3,8 դրամ/խմ-ով (ներառյալ՝ ավելացված արժեքի հարկը) պակաս է նախորդ տարվա համար սահմանված սակագնից: Միաժամանակ, սահմանվել են ջրային համակարգի օգտագործման թույլտվություն ունեցող այլ անձանց կամ համայնքներին խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման մեծածախ ծառայությունների, ինչպես նաև «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության մատուցման նոր սակագները:

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջներից ելնելով՝ ճշգրտվել և հաստատվել են հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2014 թվականի անվանական կազմը և, հաշվի առնելով յուրաքանչյուր կարգավորման պարտադիր վճար վճարողի իրացման շրջանառությունը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը:

3. Լիցենզավորում և լիցենզավորված անձանց պայմանագրային հարաբերությունների կարգավորում

Լիցենզավորման գործառույթն առանձնանում է նրանով, որ թույլ է տալիս մրցակցության բացակայության կամ սահմանափակ մրցակցության պայմաններում կարգավորվող բնագավառներում գործունեություն իրականացնող ընկերությունների համար գործունեության միասնական չափանիշների սահմանման միջոցով հավասարակշռել սպառողների և այդ ընկերությունների օրինական շահերը, կարգավորման դաշտում գործող տարբեր ընկերությունների համար վարել միատեսակ քաղաքականություն, ինչպես նաև լիցենզավորված գործունեության մոնիթորինգի միջոցով պատասխանատվության միջոցներ կիրառել իրենց պարտականությունները ոչ պատշաճ կերպով կատարող ընկերությունների նկատմամբ:

Հանձնաժողովը մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից 2013 թվականի հունիսի 19-ին ընդունված «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում

փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ուժի մեջ մտնելը (2013 թվականի հուլիսի 27-ը) էներգետիկայի բնագավառում տրամադրել է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման՝ 10, փոքր հիդրոէլեկտրակայաններում էլեկտրական էներգիայի արտադրության՝ 14 լիցենզիա, ստացել ու բավարարել է լիցենզիաների գործողությունների ժամկետների երկարաձգման 26 հայտ, ինչպես նաև լիցենզիայի վերաձևակերպման, լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքը վարձակալության տրամադրելու, լիցենզիաների պայմաններում փոփոխություններ կատարելու, լիցենզավորված գործունեության համար անհրաժեշտ գույքը գրավ դնելու կամ բաժնետոմսը (բաժնեմաս) վաճառելուն համաձայնություն տալու 36 դիմում:

2013 թվականի հուլիսի 27-ից՝ արտադրական հզորությունների կառուցման և էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունների մեկ միասնական լիցենզիայում միավորվելուց և որպես առանձին ժամանակահատվածներ ամրագրվելուց հետո, հանձնաժողովի կողմից տրամադրվել է էլեկտրական էներգիայի արտադրության 22 լիցենզիա, որից 16-ը՝ արտադրական հզորությունների կառուցման կամ վերականգնման գործունեության լիցենզիա ունեցող անձանց լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման համար: Գազամատակարարման ոլորտում բավարարվել է լիցենզիաների գործողության ժամկետների երկարաձգման 3 հայտ, էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում ստացվել և բավարարվել է պարզ ընթացակարգով տրամադրված լիցենզիաներն ուժը կորցրած ճանաչելու 10 դիմում, էլեկտրոնային հաղորդակցության բնագավառում տրամադրվել են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի 15 լիցենզիա, ռադիոհաճախականությունների օգտագործման՝ 31, սիրողական ռադիոյի՝ 7 և համարների զբաղեցման 6 թույլտվություն:

Միևնույն ժամանակ, 2013 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հանձնաժողովում իրավական փորձաքննություն են անցել և գրանցում ստացել էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև կնքված 209 պայմանագրեր:

4. Սպառողների սպասարկման որակի ցուցանիշների մոնիթորինգ

Հանձնաժողովը մշտապես հետևում է կարգավորվող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի ցուցանիշների պահպանման գործընթացին՝ ինչպես կարգավորվող ընկերությունների կողմից ներկայացվող տեղեկատվությունների վերլուծության, այնպես և ընտրանքային կարգով տեղերում իրականացվող ուսումնասիրությունների միջոցով: Այս գործիքակազմի միջոցով հանձնաժողովը մշտապես բարձրացնում է իր կողմից տարվող մոնիթորինգի աշխատանքների արդյունավետությունը:

Հանձնաժողովը էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերություններից եռամսյակային պարբերականությամբ տեղեկատվություն է ստանում սպառողների սպասարկման որակի փաստացի ցուցանիշների վերաբերյալ: Մասնավորապես, մշտական մոնիթորինգի են ենթարկվում՝

- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից՝ ընդհատումների քանակի և տևողության ցուցանիշները,
- էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից սպառողների դիմումներին, բողոքներին և հարցադրումներին պատասխանելու ժամկետները,
- առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում էլեկտրական էներգիա և բնական գազ մատակարարող ընկերությունների կողմից կատարված վերահաշվարկները և հաշվարկված տույժերը:

Սպառողների սպասարկման որակի սահմանված ցուցանիշներից շեղումների դեպքում մատակարար ընկերությունների հետ պարբերաբար իրականացվում են առկա խնդիրների կարգավորմանն ուղղված քննարկումներ, մշակվում են միջոցառումներ՝ նման խախտումները հետագայում բացառելու նպատակով: Հարկ է նշել, որ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը՝ եռամսյակային արդյունքներով հրապարակվում է հանձնաժողովի վեբ կայքում:

2013 թվականի հունվարի 1-ից սկսել է գործել սպառողների սպասարկման որակի ցուցանիշների խախտման համար էլեկտրական էներգիայի և բնական գազի

մատակարարման ու օգտագործման կանոններով սահմանված ավտոմատ տույժերի կիրառման համակարգը: Վերջինս սահմանում է, որ մատակարարը էլեկտրամատակարարման և գազամատակարարման ընդհատումների, սպառողների դիմումներին և բողոքներին արձագանքելու համար սահմանված ժամկետների, ինչպես նաև սպառողների իրավունքներին առնչվող՝ կանոններով ամրագրված մի շարք այլ ընթացակարգերի խախտման յուրաքանչյուր դեպքի համար վերջիններիս վճարում է տույժ: Տույժի չափը համարժեք է սպառողի ծախսած՝ համապատասխանաբար էլեկտրական էներգիայի կամ բնական գազի միջին ամսական արժեքի 20%-ին (բայց ոչ ավելի, քան 2000 դրամը): Հաշվարկված տույժը նվազեցվում է սպառողի նախորդ ամսում ծախսած էլեկտրական էներգիայի կամ բնական գազի արժեքից՝ այդ մասին հատուկ նշում կատարելով վճարման փաստաթղթում: Տույժերի վճարման գործընթացը մատակարարի կողմից իրականացվում է ավտոմատ եղանակով՝ առանց սպառողի կողմից որևէ դիմում կամ փաստաթուղթ ներկայացնելու պահանջի: Նշված համակարգի ներդրումից հետո, 2013 թվականին էլեկտրամատակարարման և գազամատակարարման ընդհատումների վերականգնման՝ սահմանված ժամկետների խախտման համար կարգավորվող ընկերությունների կողմից արդեն իսկ շուրջ 25000 սպառողների վճարվել է 23.3 մլն դրամ տույժ: Միևնույն ժամանակ, սպառողներին սահմանված ժամկետներում տույժեր չվճարելու և այդ մասին հանձնաժողով ոչ հավաստի տեղեկատվության ներկայացնելու համար ընկերությունները ենթարկվել են տուգանքի՝ 5 մլն ՀՀ դրամի չափով:

Հանձնաժողովն իր գործառույթների տիրույթում հետևողական քայլեր է ձեռնարկում ջրամատակարարման ոլորտում գործող ընկերությունների կողմից սպառողների սպասարկման որակի պայմանների մոնիթորինգի ուղղությամբ: 2013 թվականին պարբերաբար ուսումնասիրվել են «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների կողմից հրապարակված գրաֆիկների ու փաստացի ջրամատակարարման տևողության ցուցանիշները: Բացի այդ, հանձնաժողովը «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող 93 գյուղական համայնքներում հարցում է կատարել փաստացի ջրամատակարարման տևողության ցուցանիշների և հրապարակվող ջրամատակարարման ժամանակացույցի համապատասխանությունը գնահատելու

նպատակով: Արդյունքների հիման վրա կազմվել է վերլուծական տեղեկանք, որը հրապարակվել է հանձնաժողովի վեբ-կայքում:

Հանձնաժողովը մշտապես հետևում է նաև նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացին: 2013 թվականին իրականացված ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տվել, որ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը որոշ դեպքերում չի պահպանել նոր սպառողների սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացման ժամկետները կամ այդ առնչությամբ հանձնաժողով է ներկայացրել ոչ հավաստի տեղեկատվություն: Նշված խախտումների համար ընկերությունը ենթարկվել է տուգանքի՝ 20 մլն ՀՀ դրամի չափով, իսկ առկա խնդիրների կարգավորման նպատակով տրվել են համապատասխան հանձնարարականներ:

5. Ներդրումային ծրագրերի համաձայնեցում

Հանձնաժողովի գործառույթներից առանձնանում է նաև էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող կարճաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ծրագրերի ուսումնասիրության և համաձայնեցման գործընթացը, ինչպես նաև ընկերությունների ներդրումային գործունեության արդյունքների վերաբերյալ համապատասխան վերլուծական տեղեկանքների կազմումն ու հրապարակումը:

Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի քննարկում և համաձայնություն է տալիս էներգետիկայի բնագավառի կարգավորվող ընկերությունների հաջորդ տարիների ներդրումային ծրագրին, ինչպես նաև ամփոփում է ընկերության նախորդ տարվա ներդրումային գործունեության արդյունքները և հրապարակում համապատասխան վերլուծական տեղեկանքներ:

Ներկայումս էներգետիկայի բնագավառում հիմնական ներդրումներն իրականացնում են «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «ՀայՌուսգազարդ» («Գազպրոմ Արմենիա») և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ները: «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի ներդրումային ծրագիրը միտված է Սևան-Հրազդանյան ՀԷԿ-երի կասկադի արդիականացմանը և հետագա շահագործման համար ոչ պիտանի սարքավորումների փոխարինմանը, իսկ «Հայաստանի էլեկտրական

ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» («Գազպրոմ Արմենիա») ՓԲԸ-ների ներդրումային ծրագրերը՝ սպառողների սպասարկման որակի ցուցանիշների բարելավմանը, նոր սպառողների միացմանը, առևտրային հաշվառման համակարգերի բարելավմանը, մաշված սարքավորումների փոխարինմանը, ժամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիայի ներդրմանը, ինչպես նաև ընկերությունների բնականոն գործունեության ապահովման համար անհրաժեշտ այլ ներդրումների իրականացմանը: Հանձնաժողովը մշտապես ուշադրություն է դարձնում կարգավորվող ընկերությունների ներդրումային ծրագրերի կառուցվածքին՝ ներդրումներն առաջնահերթ կատարել առավել վատթար սպասարկման որակի ցուցանիշներ ունեցող բնակավայրերում՝ դրանք բարելավելու նպատակով:

2013 թվականի ընթացքում շարունակվել է էներգետիկայի բնագավառում կարգավորվող ընկերությունների կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի ուսումնասիրման և համաձայնեցման գործընթացը: Վերլուծության են ենթարկվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի, «ՀայՌուսգազարդ» և «Միաջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ների 2012 թվականի ներդրումային գործունեության արդյունքները: Քննարկվել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ների կողմից համաձայնեցման ներկայացված համապատասխանաբար 2014-2018 և 2014-2016 թվականների ներդրումային ծրագրերը և ընդունվել են համապատասխան որոշումներ:

2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հանրապետությունում գործում են 154 փոքր հիդրոէլեկտրակայաններ, ևս 65-ը գտնվում է կառուցման փուլում: Գործող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է շուրջ 263 ՄՎտ, և դրանք միջին տարեկան հաշվով կարող են արտադրել շուրջ 771 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գումարային հզորությունը կազմում է 145 ՄՎտ, և սպասվում է, որ գործարկումից հետո դրանք միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 512 մլն կՎտժ էլեկտրաէներգիա: Այսպիսով, կառուցվող փոքր հիդրոէլեկտրակայանների գործարկումից հետո հանրապետությունում կգործեն 219 փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնք կունենան գումարային 408 ՄՎտ հզորություն և միջին տարեկան հաշվով կարտադրեն շուրջ 1,28 մլրդ կՎտժ էլեկտրաէներգիա:

Բարենպաստ պայմաններ ստեղծելով փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման համար, հանձնաժողովը միաժամանակ հետևում է դրանց կառուցման ընթացքին՝ համապատասխան պատժամիջոցներ կիրառելով իրենց պարտավորությունները պատշաճ կարգով չկատարող ընկերությունների նկատմամբ: 2013 թվականին՝ մինչև դեկտեմբերի 31-ը, լիցենզիայի պայմանները ոչ պատշաճ կատարելու և լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետներում փոքր հիդրոէլեկտրակայանները չգործարկելու համար հանձնաժողովը կայացրել է ընկերություններին ֆինանսական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 35 որոշում:

Հանձնաժողովը մշտապես հետևում է նաև իր կարգավորման դաշտում գործող հանրային կազմակերպությունների՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «ՀայՌուսգազարդ», «Միջազգային էներգետիկ կորպորացիա», «ԱրմենՏել» ՓԲԸ-ների, «Տրանսգազ» ՍՊԸ-ի և «ՀրազՋԷԿ» ԲԲԸ-ի կողմից իրականացվող գնումների արդյունավետությանն ու թափանցիկությանը: Վերջիններիս կողմից գնումների գործընթացի թափանցիկության ապահովման նպատակով, իրականացվող գնումների մասին ողջ տեղեկատվությունը ներկայումս հրապարակվում է ինչպես ՀՀ ֆինանսների նախարարության գնումների էլեկտրոնային տեղեկագրում, այնպես և ընկերությունների վեբ կայքերում:

6. Կարգավորվող ընկերությունների ֆինանսատնտեսական գործունեության վերլուծություն

Կարգավորվող ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վերլուծության արդյունքները հիմք են հանդիսանում կարգավորմանը վերաբերող հիմնավորված որոշումների ընդունման, սակագների սահմանման ու վերանայման, ներդրումային ծրագրերի իրականացման ընթացքի գնահատման և լիցենզիայի պայմանների վերահսկման համար, ինչպես նաև հնարավորություն են տալիս ձևավորել կարգավորվող ընկերությունների ֆինանսական և տեխնիկատնտեսական ցուցանիշների համապատասխան վիճակագրական բազա:

Այդ առումով կարևորվում է կարգավորվող ընկերություններում ներդրված և կիրառվող հաշվապահական հաշվառման հաշվային պլաններում հաշիվների և ենթահաշիվների համակարգի ներդրումը, ինչը հնարավորություն է ընձեռում հստակ

տարանջատել հիմնական (կարգավորվող) և ոչ հիմնական գործունեության եկամուտներն ու ծախսերը, կատարել եկամուտների և ծախսերի մանրամասն հաշվառում և վերլուծություն: Այս համակարգն արդեն ներդրվել է էլեկտրաէներգետիկայի, գազամատակարարման բնագավառների և խմելու ջուր մատակարարող ընկերություններում, լրամշակվել են նաև ֆինանսական հաշվետվությունների ձևերը, որոնց արդյունքում կրճատվել են ընկերությունների կողմից հանձնաժողով ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների ծավալները և ներկայացման պարբերականությունը:

Կարգավորվող ընկերություններում հաշվապահական հաշվառման հաշիվների և ենթահաշիվների համակարգը կատարելագործելու նպատակով, հանձնաժողովը նախաձեռնել է ընկերությունների համար անհատական հաշվային պլանների մշակման և ներդրման աշխատանքները, ինչը հնարավորություն է տալիս ընկերություններից ստանալ առավել մանրամասն և հասցեական տեղեկատվություն, արագ և դինամիկ կերպով արձագանքել ընկերությունների կազմակերպաիրավական կառուցվածքների, նրանց գործառույթների շրջանակի, ինչպես նաև տնտեսական դաշտում օրենսդրական փոփոխություններին և համարժեք փոփոխություններ կատարել հաշվապահական հաշվառման հաշվային պլաններում:

Գազամատակարարման համակարգի ընկերությունների համար հանձնաժողովն արդեն մշակել և հաստատել է հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլաններ, իսկ 2013 թվականին այս ընկերությունների համար մշակվել և հաստատվել են ֆինանսական հաշվետվությունների լրամշակված անհատական ձևեր: Ներկայումս աշխատանքներ են ընթանում էլեկտրաէներգետիկական համակարգի ընկերությունների համար հաշվապահական հաշվառման անհատական հաշվային պլաններ մշակելու ուղղությամբ, որոնք նախատեսվում է ավարտել 2015 թվականին:

Էներգետիկայի բնագավառի և ջրային համակարգի կարգավորվող ընկերությունները, «ԱրմենՏել», «Հայփոստ», «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ները հանձնաժողովի սահմանած ձևերին համապատասխան՝ ներկայացրել են եռամսյակային, իսկ տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության ծառայություններ մատուցող ընկերությունները՝ կիսամյակային արդյունքներով ֆինանսական հաշվետվություններ, որոնց հիման վրա կատարվել է վերջիններիս

ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վերլուծություն:

Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից գումարների հավաքագրման և էլեկտրաէներգետիկական համակարգում արտադրող կայաններին և ծառայություններ մատուցող ընկերություններին «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից սահմանված կարգով և ժամկետներում վճարումներն ապահովելու և վերահսկելու գործընթացի շրջանակում, 2013 թվականին հանձնաժողովը համաձայնություն է տվել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի՝ «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ում բացված հատուկ հաշվի վարման մասին պայմանագրին, ինչպես նաև համապատասխան լրացումներ և փոփոխություններ է կատարել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի և առևտրային բանկերի և վճարահաշվարկային կազմակերպությունների միջև կնքված ծառայությունների վճարովի մատուցման մասին պայմանագրերում՝ գումարների հավաքագրման ընթացքում սպառողներից լրացուցիչ միջնորդավճարների գանձումը բացառելու նպատակով:

Էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման և ջրային համակարգերի գործունեության մասին հանրությանն իրազեկելու նպատակով հանձնաժողովը կշարունակի իր վեբ կայքում (www.psrc.am) հրապարակել կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները:

7. Հանձնաժողովի հիմնական գործունեության ընթացիկ ուղղություններ

Հանձնաժողովի՝ օրենսդրությամբ սահմանված պարտականությունների կատարմանն են ուղղված նրա հիմնական գործունեության ընթացիկ ուղղությունները:

Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակում որոշումներն ընդունում է նիստերի միջոցով, որոնք դռնբաց են և, որպես կանոն, անցկացվում են ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ: Հանձնաժողովը նախապես հայտարարում է նիստերի անցկացման տեղի և ժամի մասին, հնարավորություն ընձեռում շահագրգիռ անձանց և հանրության ներկայացուցիչներին մասնակցել նիստերին, ստանալ օրակարգն ու քննարկվող նյութերը, ներկայացնել տեղեկություններ և հանդես գալ ելույթներով: 2013 թվականի հունվարից 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում հրավիրվել է հանձնաժողովի 85 նիստ և ընդունվել 477 որոշում:

Միևնույն ժամանակ, հանձնաժողովը տարբեր կազմակերպություններից և անհատներից ստանում է տարաբնույթ գրություններ՝ պարզաբանումներ ստանալու կամ կարգավորվող ընկերությունների հետ առաջացած վեճերի լուծման նպատակով: 2013 թվականի հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամակահատվածում հանձնաժողովը կազմակերպությունների և անհատների կողմից բարձրացված հարցերին համապատասխան լուծումներ և պարզաբանումներ տալու նպատակով ուղարկել է 3311 գրություն:

Հանձնաժողովում գործում է նաև «Հրատապ հեռախոս», որի միջոցով կազմակերպությունները և անհատները խորհրդատվություն են ստանում մատակարար-սպառող հարաբերություններում իրենց իրավունքների և պարտականությունների, դրանց խախտման դեպքում անհրաժեշտ քայլերի և գործողությունների վերաբերյալ: Հանձնաժողովը նաև «Հրատապ հեռախոսի» և իր էլեկտրոնային փոստի միջոցով ընդունում և պաշտոնական ընթացք է տալիս սպառողների հարցերին: Ընդհանուր առմամբ 2013 թվականի ընթացքում քաղաքացիներից ստացվել են 688 հարցադրում և բողոք, որոնցից 190-ը՝ գրավոր, 498-ը՝ հրատապ հեռախոսով և ընդունելությունների ընթացքում: Դրանցից 361-ը դրական լուծում են ստացել, 10 բողոքներում ներկայացված փաստերը չեն համապատասխանել իրականությանը, 306-ի վերաբերյալ տրվել են սպառիչ պարզաբանումներ՝ գործող օրենքների, կարգերի և այլ նորմատիվ ակտերի համաձայն, 11 բողոքների քննարկումներ տեղափոխվել են: Սպառողների բողոքները տեղում ուսումնասիրելու նպատակով կարգավորող ընկերությունների ներկայացուցիչների և դիմումատուների հետ համատեղ կազմակերպվել են քննարկումներ, իրականացվել են ստուգայցեր և ձեռնարկվել համապատասխան միջոցներ բարձրացված հարցերը կարգավորելու ուղղությամբ:

Միևնույն ժամանակ, հանձնաժողովի մշտական ուշադրության կենտրոնում է զանգվածային լրատվամիջոցների հետ տարվող աշխատանքը, որը միտված է հանձնաժողովի ընթացիկ գործունեությունը պատշաճ լուսաբանելու և հանրությանն առավել ընկալելի ներկայացնելու խնդրին:

Հանձնաժողովի անդամները և աշխատակազմի մասնագետները հանրային հնչեղություն ունեցող խնդիրների շուրջ պարբերաբար հանդես են գալիս ճանաչողական բնույթի հաղորդումներով, պարզաբանումներով և հարցազրույցներով:

Հանձնաժողովը մշտապես համագործակցում է սպառողների շահերը պաշտպանող հասարակական կազմակերպությունների հետ, որոնց ներկայացուցիչները պարբերաբար մասնակցում են հանրային շահի տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող հարցերի քննարկմանը, ներկայացնում իրենց դիրքորոշումը, դիտողություններն ու առաջարկությունները: Նրանք մասնակցում են նաև հանձնաժողովի նիստներին և հարցերի ու ելույթների միջոցով ներկայացնում սեփական տեսակետը քննարկվող որոշումների առնչությամբ:

Հանձնաժողովի կարգավորման դաշտում գործող ընկերություններն ապահովում են ՀՀ պետական բյուջեի զգալի մուտքեր՝ լիցենզիաների (թույլտվությունների) տուրքերի, ռադիոհաճախականությունների տրամադրման և օգտագործման վճարների, կարգավորման պարտադիր վճարների, ինչպես նաև նոր արտադրական հզորությունները լիցենզիաների գործողության ժամկետում չգործարկելու կամ լիցենզիայի պայմանները ոչ պատշաճ կատարելու համար գանձվող ֆինանսական երաշխիքների գծով վճարումների հաշվին: 2013 թվականին նշված աղբյուրներից ՀՀ պետական բյուջե է փոխանցվել շուրջ 7.2 մլրդ դրամ, որի հիմնական մասը՝ շուրջ 6.3 մլրդ դրամը, կազմել են ռադիոհաճախականությունների օգտագործման և թույլտվությունների տրամադրման գծով մուտքերը:

Հանձնաժողովի գործունեության ոլորտային ծրագրերը

1. Էներգետիկայի բնագավառ

Էներգետիկայի բնագավառում մատակարար-սպառող հարաբերություններում առաջացած խնդիրների կարգավորման և սպառողների սպասարկման որակի բարելավման նպատակով 2013 թվականին մի շարք փոփոխությունների են ենթարկվել էլեկտրական էներգիայի ու բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները:

Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացման գործընթացի բարելավման, ինչպես նաև փոքր և միջին բիզնեսի զարգացման համար առավել նպաստավոր միջավայր ստեղծելու նպատակով հանձնաժողովը վերջին ժամանակահատվածում փոփոխություններ է կատարել իր

նախկին որոշումներում, որոնցով նվազեցրել է էլեկտրական ցանցին միացման և մատակարարման պայմանագրեր կնքելու առավելագույն ժամկետները: 2013 թվականին վերանայվել և հստակեցվել է էլեկտրական ցանցին միացման համար անհրաժեշտ գործընթացների քանակը, ինչպես նաև դիմողի կողմից մատակարարին ներկայացվող փաստաթղթերի ցանկը, և էլեկտրական ցանցին միացման վճարներին առնչվող որոշ դրույթներ:

Ներկայումս աշխատանքներ են տարվում նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգը բնական գազի բաշխման ցանցին միացման կանոնների լրամշակման ուղղությամբ: Դիտարկման փուլում են գտնվում բնական գազի բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ քայլերի, գործընթացների համար սահմանված ժամկետների կրճատման, ինչպես նաև միացման վճարների սահմանման հարցերը: Աշխատանքները նախատեսվում է ավարտել և նոր համակարգն ամբողջությամբ գործողության մեջ դնել 2014 թվականի ընթացքում:

2013 թվականին նոր սպառողների միացման գործընթացի բարելավման նպատակով ընդունվել է համապատասխան որոշում՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ նոր սպառողների միացման և մատակարարման պայմանագրերի կնքման էլեկտրոնային համակարգ ներդնելու վերաբերյալ, որը կգործի 2015 թվականից հունվարի 1-ից:

Բացի վերը նշվածից, էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում հստակեցվել են կազմակերպությունների էլեկտրամատակարարման պլանային ընդհատումներին, վերջիններիս առևտրային հաշվառքի սարքերի առանձին տարրերի շահագործման պատասխանատվության, ինչպես նաև սպառողների առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքում մատակարարված էլեկտրական էներգիայի վերահաշվարկմանն առնչվող դրույթները:

Լրամշակվել է նաև բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի օրինակելի ձևը: Կազմակերպությունների համար նախկինում գործող պայմանագրերի երկու օրինակելի ձևերի փոխարեն հաստատվել է մեկ միասնական՝ բնական գազի մատակարարման (Մատակարար-Բաժանորդ (կազմակերպություն)) պայմանագրի օրինակելի ձևը, որում հստակեցվել են մատակարարված բնական գազի դիմաց վճարման ժամկետները, առևտրային հաշվառքի

սարքերի շահագործման ընթացքում կողմերի պատասխանատվությունը, խոշոր սպառում ունեցող բաժանորդների գազամատակարարման առանձնահատկությունները և տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման դեպքերն ու կարգը:

Սահմանվել են նաև մեկից ավելի սահմանազատման կետերի համար պայմանագիր կնքելու առանձնահատկությունները: Դրանցից է՝ մեկից ավելի սահմանազատման կետ ունենալու դեպքում կողմերը իրավունք ունեն բոլոր սահմանազատման կետերի համար կնքել բնական գազի մատակարարման մեկ պայմանագիր: Պայմանագիրը մեկից ավելի սահմանազատման կետերի համար կնքելու դեպքում մատակարարն իրավունք ունի բոլոր սահմանազատման կետերի համար կազմել և ներկայացնել մեկ միասնական վճարման փաստաթուղթ՝ բացառելով բնական գազի սակագինը կիրառել տարբեր սահմանազատման կետերում սպառված բնական գազի ամսական քանակները գումարելու միջոցով:

Մատակարար-սպառող հարաբերությունների հստակեցման և շահերի հավասարակշռման նոր մեխանիզմների ներդրման նպատակով լրամշակվել են նաև բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները: Հստակեցվել են կանոններում կիրառվող հիմնական հասկացությունները, կազմակերպություններին և բնակչությանը մատակարարված գազի հաշվառման և վճարման կարգը, ինչպես նաև գազի մատակարարման և օգտագործման պայմաններին վերաբերող դրույթները:

2. Ջրային ոլորտ

Հանձնաժողովի իրավասությունները ջրային ոլորտում սահմանափակվում են սակագնային քաղաքականության իրականացմամբ և ոչ մրցակցային ջրամատակարարման ջրային համակարգի օգտագործման թույլտվությունների տրամադրմամբ: Չնայած այդ հանգամանքին, շարունակական բնույթ են կրում խմելու ջուր մատակարարող ընկերություններին ներկայացվող սպասարկման որակի նվազագույն պահանջների կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Յուրաքանչյուր տարի «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Նոր Ակունք», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ները հանձնաժողովի հաստատմանն են ներկայացնում սպառողների ջրամատակարարման տեղողության փաստացի մեծությունները՝ տվյալ տարեսկզբի դրությամբ և դրանց ծրագրային մեծությունները՝

հաջորդ տարեսկզբի համար: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս առաջնահերթ բարելավել առավել վատթար վիճակում գտնվող սպառողների ջրամատակարարման տևողության ցուցանիշները: Հաշվի առնելով նաև, որ սպառողներին յուրաքանչյուր ամիս նախորդ ամսում սպառած ջրի դիմաց ներկայացվող վճարման փաստաթղթերում ներկայացվում են նաև հաջորդ ամսվա ջրամատակարարման գրաֆիկի նվազագույն ժամերը, սպառողներն իրենք ևս հսկողություն իրականացնելու հնարավորություն ունեն մատակարարների կողմից հայտարարված ջրամատակարարման գրաֆիկների պահպանման նկատմամբ:

3. Հեռահաղորդակցության բնագավառ

Հաշվի առնելով էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի կարգավորման քաղաքականության գերակայությունները՝ 2013 թվականին աշխատանքներ են տարվել էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի դինամիկ և համաչափ զարգացման, արդար և բաց մրցակցության երաշխավորման, էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության ապահովման, ինչպես նաև ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ, որոնցից հատկապես կարևորվում են.

- հանրային շարժական բջջային կապի ծածկույթ չունեցող բնակավայրերը և միջպետական ավտոճանապարհների համապատասխան հատվածներն առնվազն մեկ օպերատորի կողմից հանրային շարժական կապի ծածկույթով ապահովելու նպատակով հանձնաժողովի 2013 թվականի հունվարի 23-ին «ԱրմենՏել», «Ղ-Տելեկոմ» և «Օրանժ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից իրենց հանրային շարժական բջջային կապի ցանցերը զարգացնելու և արդիականացնելու մասին» որոշման ընդունումը, որի արդյունքում՝ 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ բոլոր գյուղերն ապահովվել են առնվազն մեկ օպերատորի հանրային շարժական կապի ծածկույթով: Ընդ որում, ՀՀ բնակավայրերի 8,5 տոկոսը ապահովվել է 1 օպերատորի, 23 տոկոսը՝ 2 օպերատորների և 68,5 տոկոսը 3 օպերատորների հանրային շարժական կապի ծածկույթով: Հանրային շարժական կապի ծածկույթի ընդլայնման և տեխնոլոգիական զարգացման աշխատանքները կրելու են շարունակական բնույթ.

- շարժական կապի հեռախոսահամարների տեղափոխելիության համակարգի ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացումը: Նշված աշխատանքները համակարգելու համար 2013 թվականի փետրվարի 28-ին ստեղծել է խորհուրդ, որում ընդգրկվել են պետական և մասնավոր շահագրգիռ կառույցների ներկայացուցիչներ: Համարների տեղափոխելիության ներդրման և գործարկման նպատակով օպերատորների կողմից և նրանց ֆինանսավորմամբ ստեղծվել է ավտոմատացված կենտրոնացված տվյալների բազա: Բազան կառավարում և շահագործում է օպերատորների կողմից հիմնադրված իրավաբանական անձը՝ ադմինիստրատորը, իսկ նրա սպասարկումը իրականացնում է ադմինիստրատորի կողմից մրցութային հիմունքներով ընտրված բազայի մատակարարը: Այս նպատակով շարժական կապի օպերատորների կողմից ձևավորվել է կենտրոնացված տվյալների բազայի մատակարարի ընտրության մրցութային հանձնաժողով, որն հաջողությամբ իրականացրել է մրցութային գործընթացը: Մրցույթի արդյունքներից և մրցութային հանձնաժողովի առաջարկից ելնելով՝ որպես շարժական կապի համարների տեղափոխելիության ներդրման համար կենտրոնացված տվյալների բազայի ստեղծման և սպասարկման ծառայություններ մատուցող կազմակերպություն ընտրելու նպատակով մրցույթի հաղթող շարժական կապի հեռախոսահամարների տեղափոխելիության համակարգող խորհուրդը հաստատել է «Տելետեք» ընկերությանը:

  Շարժական բջջային կապի օպերատորների հետ համատեղ քննարկումների արդյունքում մշակվել և 2013 թվականի հուլիսի 17-ին ընդունվել են հանրային էլեկտրոնային հաղորդակցության շարժական կապի համարների տեղափոխելիության կանոնները, որոնցով սահմանվում են շարժական կապի համարների տեղափոխելիության կազմակերպման և իրականացման կարգն ու պայմանները: Հեռախոսահամարների տեղափոխման գործընթացն իրականացվում է «մեկ պատուհանի» սկզբունքով: Հարկ է նշել, որ բաժանորդի ունեցած պարտքը չպետք է խոչընդոտ հանդիսանա համարների տեղափոխելիության ծառայությունից օգտվելու համար: Տեղափոխման գործընթացը՝ օպերատորների և տվյալների բազայի փոխադարձ ճշգրտումների և

հաստատումների արդյունքում, նախատեսվում է իրականացնել 3 աշխատանքային օրվա ընթացքում, հետագայում նվազեցնելով մինչև 1 աշխատանքային օրվա:

Միաժամանակ, հանրային շարժական կապի օպերատորների և «Տելետեք» ընկերության միջև կայացած բանակցությունների արդյունքում համարների տեղափոխելիության ծառայության մեկնարկի ժամկետ է սահմանվել 2014 թվականի ապրիլի 1-ը: Հեռախոսահամարների տեղափոխելիության ծառայութ-յան ներդրումը կնպաստի սպառողների իրավունքների և հնարավորութ-յունների բարելավմանը, կխթանի շարժական կապի շուկայում մրցակցությունը, ինչպես նաև կապահովի համարային ռեսուրսի արդյունավետ օգտագործումն ու կառավարումը.

- հանձնաժողովի կողմից «Յուքոմ» ՍՊԸ-ին տրամադրված՝ ՀՀ տարածքում հանրային ամրակցված հեռախոսային ցանցի աշխարհագրական տարածաշրջանային կոդերի և համարային շարքերի զբաղեցման թույլտվությունը: Որոշմամբ սահմանվել է, որ ընկերությունը պարտավոր է զարգացնել իր հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցն ըստ սահմանված ժամանակացույցի՝ 2013-2018 թվականներին ապահովելով հանրային ամրակցված հեռախոսային ծառայությունների մատուցումը ՀՀ տարածքի առնվազն 46 քաղաքային բնակավայրերում.
- շարժական բջջային կապի օպերատորների գործունեության մասին առավել թափանցիկ տեղեկատվության, ինչպես նաև սպառողների տեղեկացվածության և որակական չափանիշների ապահովման նկատառումներից ելնելով՝ օպերատորների հետ համատեղ քննարկումների արդյունքում շարժական բջջային կապի ծառայությունների հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների վերաբերյալ հրապարակվող տեղեկատվության ձևի լրամշակումը: Մասնավորապես, փոփոխվել է օպերատորների կողմից տեղեկատվությունը հրապարակելու ժամկետը և որպես հրապարակման ժամկետ է սահմանվել հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 30-ը, նաև սահմանվել է, որ հրապարակման ենթակա ցուցանիշները հաշվարկվում են Հայաստանի Հանրապետությունում գործող հաշվապահական հաշվառման միջազգային

ստանդարտների համաձայն.

- անալոգայինից թվային հեռուստառադիոհեռարձակման անցնելու գործընթացի շրջանակում հանձնաժողովի կողմից 801-811ՄՀց և 842-852ՄՀց ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվության տրամադրման մրցութային գործընթացի կազմակերպման և անցկացման աշխատանքները: Մրցութային գործընթացի շրջանակում գրանցվել է մրցույթի մասնակցության միայն մեկ հայտ, որի արդյունքում հանձնաժողովի կողմից հաղթող է ճանաչվել «Յուքոմ» ՍՊԸ-ն: Նշված ընկերությանը տրամադրվել է 801-811ՄՀց/842-852ՄՀց հաղորդման/ընդունման ռադիոհաճախականությունների հատվածի օգտագործման թույլտվություն: Թույլտվությունն ուժի մեջ մտնելու պահից մեկ տարվա ընթացքում «Յուքոմ» ՍՊԸ-ն պարտավորեցվել է ապահովել Երևան քաղաքում և հարակից հիմնական համայնքներում լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթ, իսկ երկու տարվա ընթացքում ապահովել միջպետական մայրուղիների, ինչպես նաև բնակավայրերի առնվազն 80 տոկոսում լայնաշերտ ինտերնետային բացօթյա ծածկույթ: Ընդ որում, այն պետք է ներառի Սևան, Ծաղկաձոր, Ջերմուկ, Դիլիջան քաղաքների տարածքները, Երևան քաղաքը Դիլիջան, Ծաղկաձոր և Սևան քաղաքներին միացնող մայրուղիներն ամբողջությամբ, ինչպես նաև Երևան քաղաքը Ջերմուկ քաղաքին միացնող մայրուղու 95 տոկոսը:

  Նոր ընկերության մուտքը շարժական կապի շուկա նպատակաուղված է ՀՀ մարզերում նորագույն (չորրորդ սերնդի LTE) տեխնոլոգիաների ներդրմամբ հեռահաղորդակցության ենթակառուցվածքների զարգացմանը, մրցակցության խթանմանը, ինչպես նաև լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ապահովմանը, որն իր հերթին կնպաստի հեռահաղորդակցության ոլորտի դինամիկ և համաչափ զարգացմանը.
- հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունները դասակարգելու և հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների շուկաները սահմանելու մասին որոշման ընդունումը, որը էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորման գերակայություն է և նպատակաուղղված է հստակեցնելու կարգավորման ենթակա շուկաների ցանկը, որի հիման վրա հանձնաժողովը

վերլուծելու է յուրաքանչյուր առանձին շուկան՝ պարզելու դրանում գերիշխող դիրքի առկայությունը և կիրառելու օրենքով ամրագրված պարտավորություններ շուկայում գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների նկատմամբ:

Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջև մրցակցության զարգացմանը նպաստելու և տեխնոլոգիական չեզոքություն պահպանելու կարգավորման քաղաքականության արդյունքում 2013 թվականին՝

- հանրային ամրակցված հեռախոսացանցի թվայնացման մակարդակը ամբողջ հանրապետության մասշտաբով հասցվել է 87.8 տոկոսի.
- հանրապետության տարածքում գործում են բջջային կապի փոխադարձ ներթափանցման ծածկույթ ունեցող 3G տեխնոլոգիայի վրա հիմնված երեք ցանցեր, 2012 թվականին շարժական բջջային կապի բաժանորդների քանակը կազմել է 3322837, իսկ 2013 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3346275.
- գործում է 4G/ LTE տեխնոլոգիայի վրա հիմնված ցանց, որը հասանելի է Երևան, Գյումրի, Վանաձոր, Դիլիջան և Ծաղկաձոր քաղաքներում.
- Երևան քաղաքի ավելի քան 90 տոկոս տարածքում, ինչպես նաև Աշտարակ, Արտաշատ, Մասիս, Արմավիր, Մեծամոր, Մարտունի, Սևան, Վանաձոր, Չարենցավան, Հրազդան, Գյումրի, Կապան, Քաջարան, Իջևան և Դիլիջան քաղաքներում հասանելի են դարձել FTTx տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերը: Նախատեսվում է, որ այս տեխնոլոգիայի վրա հիմնված ցանցերը լայնածավալ տարածում կունենան նաև հանրապետության այլ բնակավայրերում.
- տարեվերջի դրությամբ միջազգային «ԱյՓի» տարանցման հոսքերի թողունակությունը հանրապետությունում կազմել է 76000 Մբիթ/վ, որը 2012 թվականի համեմատությամբ աճել է մոտ 40%-ով.
- Ստորև բերված է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության հոսքերի թողունակության աճի դինամիկան 2008-2013 թվականների համար.



- մրցակցության արդյունքում միջազգային «ԱյՓի» տարանցման ծառայության հոսքերի աճի շնորհիվ նվազել է նաև այդ ծառայության սակագինը: 2013 տարեվերջին այն կազմել է 7669 դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով շուրջ 15%-ով.

Ստորև բերված է միջազգային «ԱՅՓԻ» տարանցման ծառայության սակագնի նվազման դինամիկան 2008-2013 թվականների համար.



- լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մանրածախ շուկայում (առանց շարժական 3G) գերակշռում են լարային xDSL տեխնոլոգիայով օգտվող բաժանորդները, որոնց տեսակարար կշիռը կազմում է մոտ 66 տոկոս, իսկ այդ տեխնոլոգիայի հիման վրա առաջարկվող 1Մբիթ/վ արագությամբ ինտերնետ հոսքի արժեքը՝ 4500 դրամ: Դրա հետ մեկտեղ, մանրածախ շուկայում լայն տարածում են ստանում առավել արագագործ տեխնոլոգիաների (օրինակ՝ FTTx)

վրա հիմնված ինտերնետ հասանելիության սակագնային փաթեթներ, որոնք սպառողներին առաջարկվում են ինչպես ինքնուրույն ծառայության, այնպես էլ «Երեքը մեկում (Triple Play)» ձևաչափով՝ ներառելով նաև IP հեռուստատեսություն և հեռախոսակապ: Մասնավորապես, շուկայում «Երեքը մեկում» ծառայությունների փաթեթով IP հեռուստատեսության և հեռախոսակապի հետ միասին առաջարկվում է նվազագույնը ինտերնետ հոսքի 11Մբ/վ արագություն՝ 10000 դրամ արժեքով: Պետք է նկատել, որ շուկայում նշված տեսակի ծառայության տարածմանը զուգընթաց նվազում են նաև առաջարկվող սակագները:

Ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների քանակը (այդ թվում՝ շարժական 3G և GPRS բաժանորդները) 2013 թվականին կազմել է 2036286, որը 2012 թվականի համեմատ աճել է մոտ 6 տոկոսով:

Հանրապետությունում օրեցօր մեծանում են լայնաշերտ ինտերնետ ծառայությունների մատուցման ծավալները, որոնց բաժանորդների քանակը (ներառյալ՝ շարժական 3G) 2013 թվականին կազմել է 1166342: Ստորև բերված է լայնաշերտ ինտերնետից օգտվող բաժանորդների քանակի աճի դինամիկան 2008-2013 թվականների համար.



- Էականորեն կրճատվել է հեռախոսակապի միջոցով (dial-up) ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների քանակը. 2012 թվականին արձանագրվել է 2549, իսկ 2013 թվականին՝ 1825 բաժանորդ:

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համագործակցությունը միջազգային կազմակերպությունների հետ

Հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում միջազգային լավագույն փորձն ուսումնասիրելու և Հայաստանի Հանրապետությունում դրա կիրառման հնարավորությունները դիտարկելու նպատակով հանձնաժողովը մշտապես համագործակցում է տարբեր միջազգային կառույցների հետ: Մասնավորապես, մշտական համատեղ աշխատանքներ են տարվում Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի հետ, Ասիական զարգացման բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, ԱՄՆ կարգավորող հանձնաժողովների ասոցիացիայի, Հեռահաղորդակցության միջազգային միության, կապի տարածաշրջանային համագործակցության և Եվրոպական Միության հովանու ներքո գործող Ինոգեյթ ծրագրի հետ:

2013 թվականին հանձնաժողովի մասնագետները գործուն մասնակցություն են ունեցել էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ընկերակցության (ERRA) հանդիպումներին և նիստերին, Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և Կրթության զարգացման ակադեմիայի կողմից կազմակերպված սեմինարներին: Միևնույն ժամանակ, Ուկրաինայի հեռահաղորդակցության ոլորտը կարգավորող ազգային հանձնաժողովի ներկայացուցիչների հետ Երևանում և Կիևում կայացել են երկկողմանի աշխատանքային հանդիպումներ:

Հանձնաժողովն իր մասնակցությունն է ունեցել նաև Մաքսային Միության անդամակցությանն առնչվող բազմակողմ համաձայնագրերի ուսումնասիրության աշխատանքներին և ներկայացրել առաջարկություններ: